ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

.................................... 2017 թվականի N...........-Ն

## ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՄ ՆԵՐՄՈՒԾՈՂ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՕՏԱՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 391-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

**1.** Հաստատել արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Սույն որոշումը տարածվում է նաև սույն որոշման պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 2018 թվականի հունվարի 1-ը սույն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան արտադրող կամ ներմուծող

չհանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքների մնացորդների դրոշմավորման վրա:

Հավելված
ՀՀ կառավարության 2017թվականի
____________-ի ______-ի N_____-Ն որոշման

# ԿԱՐԳ

## ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՄ ՆԵՐՄՈՒԾՈՂ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՕՏԱՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են արտադրող կամ ներմուծող չհանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ դրոշմավորման պարտավորություն կրող) մոտ առկա՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 390-րդ հոդվածի 1-ին մասի ցանկով սահմանված՝ 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո դրոշմավորման ենթակա նոր ապրանքների մնացորդների դրոշմավորման հետ կապված հարաբերությունները:

2. Դրոշմավորման պարտավորություն կրողները չդրոշմավորված ապրանքների մնացորդների դրոշմավորման նպատակով մինչև այդ ապրանքներն իրենց կողմից առանց դրոշմավորման օտարելու համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված վերջնաժամկետը գույքագրում են իրենց մոտ առկա

չդրոշմավորված ապրանքները և դրանց վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում են հարկային մարմին՝ համաձայն N1ձևի:

3. Հարկային մարմինը գույքագրված ապրանքների քանակի (մնացորդի) վերաբերյալ ստացված տեղեկությունների ճշտման նպատակով օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել հսկողական միջոցառումներ:

4. Դրոշմապիտակները տրամադրվում են անվճար՝ հարկային մարմին ներկայացված՝ չդրոշմավորված ապրանքների քանակին (մնացորդին) համապատասխան: Հարկային մարմնի իրականացրած հսկողական միջոցառումների արդյունքում չդրոշմավորված ապրանքների այլ քանակ (մնացորդ) արձանագրվելու դեպքում դրոշմապիտակները տրամադրվում են արձանագրված քանակին (մնացորդին) համապատասխան:

5. Դրոշմավորման պարտավորություն կրողները հարկային մարմին ներկայացրած՝ չդրոշմավորված ապրանքների քանակին (մնացորդին) համապատասխան դրոշմապիտակները ձեռք են բերում իրենց հաշվառման վայրի հարկային մարմնից՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված □տեղական□ մակագրությամբ դրոշմապիտակների ձեռք բերման հայտի հիման վրա: Հայտը ներկայացվում է մինչև դրոշմավորման ենթակա ապրանքներն առանց դրոշմավորման օտարելու համար Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մինչև նշված ժամկետը կարող են կատարվել ճշգրտումներ՝ նոր հայտ ներկայացնելու եղանակով:

6. Դրոշմավորման պարտավորություն կրողները մինչև դրոշմավորման ենթակա ապրանքների օտարումն այդ ապրանքների տեսակի, ենթատեսակի (նկարագրի), տարողության (ծավալի, քաշի կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորի), քանակության և համապատասխան դրոշմապիտակների սերիաների ու հերթական համարների (այդ թվում` միջակայքերով) վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև այդ տեղեկություններում ճշգրտումները հարկային մարմին ներկայացնում են Օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

7. Դրոշմավորման պարտավորություն կրողները չդրոշմավորված ապրանքների մնացորդների դրոշմավորումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի □Ապրանքների դրոշմավորման կանոնները սահմանելու մասին□ N773-Ն որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան:

| **Տեղեկություններ**<br><br>արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից գույքագրված ապրանքների մնացորդների վերաբերյալ | Փաստաթղթի հերթական համարը<br>______________________________<br>(լրացվում է հարկային մարմնի կողմից) | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | | | | | | | | |
| 2.Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը | | | | | | | | |
| 3.Գտնվելու վայրը (անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը) | | | | | | | | |
| 4.Հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը | | | | | | | | |

| 5.Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ | 6.Ապրանքախմբի համառոտ անվանումը | 7. ապրանքատեսակի անվանումը | 8.Ենթատեսակը (նկարագիրը) | 9.Տարողությունը (ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավոր) | 10.Դրոշմավորման համար անհրաժեշտ դրոշմապիտակների քանակ |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | Ընդամենը | |

**Հարկ վճարողի/ղեկավարի** ______________________________
**(ստորագրությունը, անունը, ազգանունը)**

«___» ______________ 20 թ.

Ծանոթություն.

1. 1-ին կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),

2. 2-րդ կետում լրացվում է կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, տեղեկությունների ընդունման ծրագրի կողմից՝ ինքնաշխատ,

3. 3-րդ կետում լրացվում է կազմակերպության գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը, տեղեկությունների ընդունման ծրագրի կողմից՝ ինքնաշխատ,

4. 4-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը,տեղեկությունների ընդունման ծրագրի կողմից՝ ինքնաշխատ,

5. 5-րդ կետում լրացվում է պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ծածկագիրն ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկ դասակարգչի,օրինակ՝ 3307,

6. 6-րդ կետում լրացվում է ՀՀ հարկային օրենսգրքի 390-րդ հոդվածով սահմանված՝ դրոշմավորման ենթակա ապրանքախմբի համառոտ անվանումը, օրինակ՝ խնամքի միջոցներ,

7. 7-րդ կետում լրացվում է ապրանքատեսակի անվանումը,օրինակ՝ Արգո,

8. 8-րդ կետում լրացվում է ապրանքի ենթատեսակը (նկարագիրը),օրինակ՝ կրեմ,

9. 9-րդ կետում լրացվում է ապրանքի տարողությունը (ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավոր),օրինակ՝ 50գր,

10. 10-րդ կետում լրացվում է դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման համար անհրաժեշտ դրոշմապիտակների քանակը, իսկ սյունակի վերջում նշվում է ընդամենը քանակը:

**Հիմնավորում**

**«Արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).**

2016 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 391-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը մինչև օրենքով սահմանված՝ դրոշմավորման ենթակա ապրանքներն իրենց կողմից առանց դրոշմավորման օտարելու վերջնաժամկետը ներառյալ կարող են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով դրոշմավորել իրենց մոտ առկա՝ դրոշմավորման ենթակա ապրանքների գույքագրված մնացորդները:

Նախագծի ընդունման նպատակը Օրենսգրքի կիրարկումն ապահովելն է:

**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Նախագծով առաջարկվում է կարգավորել արտադրող կամ ներմուծող չհանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մոտ առկա՝ Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասի ցանկով սահմանված՝ 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ և

դրանից հետո դրոշմավորման ենթակա ապրանքների մնացորդների դրոշմավորման հետ կապված հարաբերությունները:

**3. Առկախնդիրների առաջարկվող լուծումները.**

Նախագծով առաջարկվում է հաստատել արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգը:

**4. Կարգավորման առարկան.**

Նախագծի կարգավորման առարկան արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո դրոշմավորման ենթակա ապրանքների մնացորդների դրոշմավորման կարգի հաստատումն է:

**5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Նախագիծը մշակվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից:

**6. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է հաստատել արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգը:

**Տեղեկանք**

**«Արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ**

«Արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

**Տեղեկանք**

**«Արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ պետական բյուջեի եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին**

«Արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ պետական բյուջեի եկամուտների նվազեցում կամ ծախսերի ավելացում չի ակնկալվում: